ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության փորձագետ Սյուզաննա Եղիազարյան

Ես՝ Սյուզաննա Եղիազարյանս, 2024 թվականի հունվարի 4-ի N1 պայմանագրի համաձայն որպես փորձագետ աշխատում եմ ՀՀ ֆինանսների նախարարության սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությունում:

2024 թվականի ապրիլի 4-ից մինչև հուլիսի 3-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Բյուջետային գործընթացի շրջանակներում վարչության իրավասությունների շրջանակներում կրթության ծրագրերի գծով պետական կառավարման մարմիններից ստացված պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերի վերլուծության և ներկայացման աշխատանքներին մասնակցություն:

2. Միջազգային կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների, Նախարարության այլ ստորաբաժանումների գրություններում բարձրացվող տարբեր հարցերի, ինչպես նաև ստացված իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքների իրականացում:

3. ՀՀ պետական բյուջեով նախատեսվող ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներով իրականացվող հատկացումների, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումների վերաբաշխումների կատարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

ՀՀ ֆինանսների նախարարության
Սոցիալական ծրագրերի բյուջետային
գործընթացի կազմակերպման վարչության փորձագետ

Սյուզաննա Եղիազարյան **03.07.2024թ.**